

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թումանյանի գրած մի բանի բանաստեղծություններում (ինչպես և հոգվածներում ու նամակներում) արտացոլված են հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող քաղաքական դեպքերը, և որքան էլ դրանք առաջին հայացքից ասողային լինեն իրենց խորքով և արտահայտչական միջոցներով, առաջնորդվում են համամարդկային գաղափարներով, դառնում կոչ՝ պատերազմ հրահրող պետությունների դեմ:

1914—1916 թթ. գրված նրա մի քանի բանաստեղծություններում իրենց վառ արտահայտությունն են գտել բանաստեղծի սեփական աչքերով տեսած իրադարձություններն ու ողբերգությունները, բայց շնայած դրան, Թումանյանը այդ երկերում ընդհանուր առմամբ մնացել է լավատես և երբեք չի կորցրել հույսը ժողովրդի լավ ապագայի նկատմամբ: 1914 թ. հոկտեմբերից մինչև 1915-ի հուլիս ամիսը գրած և հրապարակած չափածո գործերում ու հոգվածներում նա ի հայտ է բերել իր համոզմունքն այն մասին, որ բարբարոսներից շարաշար հալածված իր ժողովուրդը ապրում է վերջին տագնապը և կոչվում վերջին անգամ (նկատի ունենք «Երրորդ զարկը», «Վերջին տագնապը» հոգվածները, նույն վերնագրով («Վերջին տագնապը») և «Վերջին օրը» բանաստեղծությունները, «Հին խոսքը» պատմական ակնարկը¹, «Վան ու Երևան», «Հանգիստ ու լիքը հավատով» հոգվածները և այլն):

1914 թ. հոկտեմբերի վերջերին, երբ տակավին նոր էին սկսվել ռազմական գործողությունները կովկասյան ճակատում և նոր էին հայ կամավորական խմբերը սպարապետվում միանալու ռուսական բանակին, Թումանյանը մեկնում է Բաքու: Տեղական թերթերը ոչինչ չեն հրապարակում այդ մասին, բայց «Արև» օրաթերթը նոյեմբերի 5-ին տպագրում է «Վերջին տագնապը» բանաստեղծությունը՝ գրված Բաքվում, նոյեմբերի 3-ին և դրանով հայտնի դարձնում բանաստեղծի Բաքվում գտնվելը:

Թումանյանի դիմանում որևէ վավերագիր կամ հիշատակություն առայժմ մեղ չի հանդիպել հուշերու, թե ինչ նպատակով է նա անակնկալ Թիֆլիսից մեկնել, ուստի մնում է ենթադրություններ անել՝ ելակետ ընդունելով ժամանակի պահանջները: Հավանական է, որ Թումանյանը մեկնել էր Բաքու պատերազմից տուժածներին օգնող նորաստեղծ կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ՝ տեղի հայ բնակչության մեջ հանգանակություն կազմակերպելու, նրանց անձամբ լսելի դարձնելու այն բոլորը, ինչ հրապարակել էր հոգվածներով: Որպես ապացույց կարելի է հիշատակել նաև այն, որ նոյեմբերի 5-ին

¹ «Հին խոսքը» ակնարկը, որ տպագրվել է 1914 թ. նոյեմբերի 16-ին «Հորիզոն» գրական-գեղարվեստական պատկերազարդ հավելվածում (№ 1), հետագայում մոտացվելով գուրս է մնացել ժողովածուներից: Միայն վերջերս այն վերահրատարակվեց «Բանբեր Երևանի համալսարան» պարբերականում, 1986, № 3, էջ 67—90:

Բաքվից կամավորների մեծ խումբ է ուղևորվել ռազմադաշտ, որոնց էլ, պետք է կարծել, ուղղված է եղել «Վերջին տագնապը» բանաստեղծությունը:

Ազդարարելով հնօրյա վիշապի նոր թափով ասպարեզ գալը, ալևոր լեռներն ի վեր» և ամենուրեք ահավոր ոճիրներ ու մահ տարածելը, «Նեղինակը Վերջին տագնապը» բանաստեղծության մեջ ի հայտ է բերում մեր ժողովրդի դարավոր տառապանքն ու ազատագրության հույսերը:

Բանաստեղծության գործող անձինք կիսամեռ տանջվողներ են, որ մարտի են ելել անձնվեր քաջ խմբերով, կռվում են «անընկճելի ու արի», ծառս են լինում մինչև լեռների ձերմակ գլուխները: Բանաստեղծի նպատակն է ոչ միայն ցույց տալ այդ կիսամեռ տանջվողների հաղթելու և ապրելու ձգտումը, այլև հավատացնել նրանց, որ կռվում են վերջին անգամ, իսկ դրա համար անհրաժեշտ է հավաքվել «Հորձանք տալով ամեն կողմից հայություն», որովհետև նրանց դարավոր կանչերի արձագանքները տեղ են հասել, անցնելով լեռների սպիտակ գագաթներին, հասել հեռու հեռուները...

Ու ամպերում, բարձր ուսից Մասիսի

Սլանում է մեծ արծիվը հյուսիսի,

Երևալ դեպի բարձունքները հայկական

Իր հետևից հայի բախտն ու ապագան:

Բանաստեղծի այդ օրերի լավատեսության աղբյուրը իր ժողովրդի անկոտրում կամքն էր և ռուսական բանակի արդեն իրական թվացող օգնությունը: Բանաստեղծությունը, գրված հայ զինվորների՝ ռուսական բանակին միանալու նախօրյակին, կոչ է, հրավեր աշխարհով մեկ ցրված հայությանը՝ ոչինչ չխնայել հանուն ազատության, հանուն գոյատևման:

1914 թ. դեկտեմբերին վերադառնալով դեպի Արևմտյան Հայաստան (Բալազետ, Ալաշկերտ, Բասեն և այլն) կատարած իր ճամփորդությունից, Թումանյանը չհրապարակեց տպավորությունները (չնայած ծոցատետրերում արված բազմատեսակ գրառումներին), բայց վերադարձից 3—4 օր առաջ Փիլ. Վարդազարյանին գրած նամակում որոշակի արտահայտում է իր տագնապը. «Ընդհանրապես, շատ տխուր են տպավորություններս և շատ հեշտ կարող ենք աղետալի դեպքերի հանդիպել, էնքան խախտում է մեր վիճակը»,—գրում է Թումանյանը²: Այդ մասին հրապարակավ հանդես չգալու պատճառը ոչ միայն ժամանակի ռազմական գրաքննչությունն էր, այլև նրա գործունեության մեջ տարբեր արտահայտություններով դրսևորված ռուսական կողմնորոշումը, որին նա երբեք չդավաճանեց:

1915-ի հունվարի 25-ին լույս տեսավ ռուսերենից թարգմանած սերբական ժողովրդական վիպերգը՝ «Բե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը՝ Մոսկվայի ցարի ընծաների փոխարեն» վերնագրով: Սերբ ժողովրդի բանահյուսության այդ հետաքրքիր նմուշի հապճեպ կատարված թարգմանությամբ Թումանյանը ցույց է ավել թուրքական բռնակալության՝ Ռուսաստանից պարտվելու մոտավորտ հնարավորությունը:

Այդ նույն օրերին Թումանյանը գրում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, որը նախ տպագրվում է «Հորիզոն» օրաթերթի փետրվարի 8-ի (N 30) գրական-գեղարվեստական պատկերազարդ հավելվածի N 12-ում և ապա, ամիսներ անց, «Նոր հոսանք» ամսագրի 1915 թ. N 1-ում, որ լույս տեսավ օգոստոս ամսին: Մինչև այժմ ստույգ հայտնի չէր այդ նշանավոր բանաստեղծության տպագրման ամիսը և օրը. առաջին հրատարակություն էր համարվում «Նոր հոսանք» ամսագրում լույս տեսածը, որից կարող էր այն տպավորությունը ստացվել, թե բանաստեղծությունը գրված է դեպի Վան կա-

² Տե՛ս Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ. գ. 2, Երևան, 1969, էջ 245:

³ Հովհ. Թումանյան. Սրկերի ժողովածու. հ. 5, Երևան 1945, էջ 404:

տարած ճանապարհորդությունից (1915, հունիս) հետո, որն, անշուշտ, սխալ կլիներ⁴:

«Հորիզոնի» հավելվածի փետրվարի 8-ի համարում լույս տեսնելուց մեկ շաբաթ տոաջ օրաթերթում հայտարարություն կա, որ առաջիկա կիրակի լույս է տեսնելու Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը. դրանից կարելի է եզրակացնել, որ այն գրվել է 1915-ի հունվարի վերջերին:

Բանաստեղծության գաղափարական բովանդակությունն առնչվում է երկու լական խնդրի, որոնցից առաջինը կապվում է Թումանյանի՝ Արևմտյան Հայաստան կատարած ճամփորդության հետ, ուր նա տեսել էր քանդված, այրված դյուղեր ու շենքեր, ավերված քաղաքներ ու եկեղեցիներ, թալանված ժողովուրդ ու գաղթականների շարքեր և բանաստեղծության յուրաքանչյուր վեպնակից հետո ամփոփելով Հայաստանի բնաշխարհի իրավիճակը, գրել էր այսպիսի տողեր. «Ջարկված հայրենիք, ղերկված հայրենիք», «Ողբի՛ հայրենիք, որի՛ հայրենիք»:

Հեղինակը միաժամանակ տեսավ, որ անդունդի եզրին կանգնած, իր գոյատևման համար պայքարող ժողովուրդը ամուր հենարան չունի, և դրա համար էլ բանաստեղծության առաջին երկու վեպնակները դարձել են մի նոր «Ողբ հայրենասերի»:

Բայց բանաստեղծը ունի իր կայուն սկզբունքը, որով առաջնորդվել է միշտ. նա հավատ ունի իր ժողովրդի ապագայի նկատմամբ, ուստի ստեղծագործության կեսից նրա խոսքը նոր թափ է ստանում, բոլորովին նոր բովանդակություն, և ողբերգությունը տեղի է տալիս լավատեսության: Բանաստեղծը այդ օրերի ծանր հետևանքները մի կողմ թողնելով՝ «...հանուր կյանքի արշալույս» է ավելացնում, հայ ժողովրդին խոստանալով նոր, «Հզոր հայրենիք», թևակա առաջին ճամփորդության ժամանակ ծոցատետրերի գոռոռումներում ավելի ցայտուն է հեղինակի «Մղկտացող սիրտը» «Ջարկված ու ղերկված» հայրենիքի համար, բան «...Հանուր կյանքի արշալույսի» հույսը⁵:

Ինչպես տեսնում ենք, անառարկելի է, որ «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը իսկապես գրված է Արևմտյան Հայաստան հեղինակի կատարած առաջին ճամփորդությունից հետո: Եվ ընդհանրապես, եթե հետևելու լինենք Թումանյանի հայրենասիրական բանաստեղծությունների տարեգրությանը, կտեսնենք, թե որքան բազմազան են տարբեր տրամադրությունների գեղարվեստական դրսևորումները՝ կապված նշանավոր դեպքերի, իր ժողովրդին վերաբերող քաղաքական հարցերի հետ:

1915-ի դարձան շարունակվում էր կովկասյան բանակի առաջխաղացումը Արևմտյան Հայաստանում, հատկապես Օլթիի և Արդվիկի ուղղությամբ: Մակուից ներսևս և պիսկոպոս ապրիլի 17-ին հեռագրել էր Թիֆլիս, գլխավոր, թե Արաղայի դաշտից Ս. Թադևոսի վանքն են և կել 160 փախստականներ, որոնք լուր են բերել նոր կոտորածների, բրդերի ու թուրքերի դեմ վանի հայերի մղած օրհասական կռիվների մասին, խնդրելով շուտափույթ օգնություն⁶:

Իրար և տեղից լուրեր էին գալիս նաև Պոլսի հոգևոր գործիչների և մի քանի հարյուր հայ մտավորականների բանտարկության մասին⁷: Սկսվել էր աննախադեպ մի եղևոն, որի զոհն էր արևմտահայ ժողովուրդը էրզրումից մինչև Կիլիկիա, Սև ծովից մինչև Միջագետք: Նույն օրերին տեղի էր ունենում Դիլմանի հայտնի ճակատամարտը, որտեղ անօրինակ քաջագործություններով աչքի են ընկնում հայ կամավորները՝ իրենց ղեկավար ունենալով Անդրանիկին:

⁴ Նույն տեղում, հ. 1, 1950, էջ 655 և Հոմ. հ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 2, 1969, էջ 435:

⁵ Ե. Հարենցի անվան զրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, № 253:

⁶ «Հորիզոն», 1915, № 84 (ապրիլի 19):

⁷ Նույն տեղում, № 86 (ապրիլի 22) և հաջորդ համարները:

Այդ սգի, տաճնապնների, հաղթանակի և սպասումներով լի օրերին, մայիսի 2-ին հրապարակվեց Թումանյանի «Վերջին օրը» բանաստեղծությունը⁸, որն այդ միջոցին հնչեց որպես ռազմի կոչ՝ ուղղված կռիվող հայ մարտիկներին և հուսադրում ու սփոփանք՝ խուճապի ենթարկված, իր կորուստները ազատող հայ ժողովրդին։ Բանաստեղծությունը լի էր հավատով ու լավատեսությամբ. այն իր ժողովրդին կոչ էր անում միաբանվելու. բոլոր կողմերից օգնության հասնելու կործանման եզրին հասած արևմտահայությանը։

Բանաստեղծությունն ունի երկու հերոս. մեկը հայդուկն է՝ հավաքական կերպարը այդ օրերին կռիվող հայ զինվորների, մյուսը խմբապետն է՝ փորձված ու հեռատես, որ մարտի է մղում, հուսադրում, հավատ ներշնչում մարտնչողներին։ Եվ կռվում են անձնուրաց հայդուկները Եփրատի ափին։ Նրանց դիմաց դիմադրող թշնամին է, իսկ հեռվում, «Մինչև բարձրաբերձ ժայռերը Մոկաց», մինչև Մուշ ու Սասուն, մինչև Վան, Արաղա, Զեյթուն կրակ է ու բոց. թվում է մոտ է ժամը կորսության, բայց հայդուկը «ինչպես ափի մեջ տեսնում է, որ Սև ծովից մինչև ծովը՝ Վրկանա, Սյունյաց մութ-մութ սարերից, Գուգարքից ու Շիրակից մինչև Այրարատ»

Գալիս են ամեն կողմից Կովկասի,
Գալիս են ցրված տղերքը նորից,
Գալիս են՝ պարզած զորուն հայրենի...

Ազատություն երազող և օգնության ձեռք փնտրող հայ զինվորը հեռվից տեսնում է, որ

Շարժվում է. տհա, հյուսիսն ընդհանուր
Հորձանք է տալիս ծովը ռուսական։

Խմբապետը նոր ուժ է ստանում ու համոզված, որ օգնության է գալիս Ռուսաստանը ու մեջքին ամուր թիկունք ունի՝ մի նոր եռանդով ոգևորում է հայդուկին.

Հե՛յ, ընկեր, կանչեց. դե՛ ցած եկ արագ,
Առ հրաքանդ. դաշտն իշի շուտով,
Իշի սրբազան ափը Եփրատի,
Հին պատերազմի վերջին զարկն է սա,
Հին ոճրագործի՝ ռզմարթն է սա...

Դաշտ իջնելու և կռվելու պատրաստ է հայդուկը, նրան մարտի են մղում «Հայոց երկնահաս լեռների վերա» լսվող խորհրդավոր ձայները, խոշտանգված նախնիների, հին ու նոր հանգուցյալների «Արյան մրրիկով երկինք վերացած» հոգիների բողոքը։ Հայդուկը իր խմբապետի կանչով պիտի իջնի ափը Եփրատի ու կռվի մինչև իր արյան վերջին կաթիլը, չէ՞ որ

Մեծ տառապանքի վերջին օրն է սա...

Պատերազմի առաջին օրերից, ինչպես ասացինք, բանաստեղծը համակված էր մի հաստատ հավատով, որ իր ժողովուրդը պայքարում է վերջին անգամ։ Հատկապես զարնան հաղթանակները Թումանյանին նոր հույսեր ներշնչեցին բանաստեղծական խոսքի վերածելու իր մտահղացումները, որոնց սկիզբը կարելի է տեսնել «Երրորդ զարկը» հոգնածում՝ գրված կովկասյան բանակի առաջին հաղթանակներից հետո։ Այս պատերազմում Թումանյանը «ավանդական խորհրդավոր երրորդ զարկը» համար վճռական տեղ էր տալիս Ռուսաստանին և «ժողովրդական հերոս Անդրանիկին» ու նրա ընկերներին, ինչպես և ազատության գաղափարի համազգային բնույթին։ Այդ էր, ըստ հե-

⁸ Նույն տեղում, № 94, նաև՝ Թումանյանի Ուսումնասիրություններ և հրապարակումներ. գ. 2, էջ 246—248։

դիմաւոր, ապահովում հայ ժողովրդի ապագան ու առաջնորդում դեպի ազատ ազգերի եղբայրությունը՝

Անդրանիկի մասին սա Թումանյանի առաջին հրապարակային ելույթն էր՝ և այստեղ պետք է փնտրել «Վերջին օրը» բանաստեղծության մտահղացման ակունքը։ Իսկ այդ իրավունք չի՝ տալիս մտածելու, որ այս բանաստեղծության երկրորդ հերոսի՝ խմբապետի նախատիպը Անդրանիկն է։ Վերջինիս հերոսական անցյալը և այդ օրերի անձնուրաց պայքարը՝ ռուսական բանակի օգնությամբ, կարող էր ներշնչել բանաստեղծին, որ հայ ժողովրդի ազատության համար մղվող մարտերի վերջին օրն է։ Կարելի է մտածել նաև, որ ինչպես բանաստեղծության առաջին հերոսը՝ հայդուկն է հավաքական, այնպես էլ խմբապետը կարող է սիմվոլիկ ղեկավարի հավաքական կերպար լինել։ Բայց չկար հայդուկային անցյալով մի այլ խմբապետ, որն այդ օրերին հավատար ռուսական օգնությանը այնպես, ինչպես Անդրանիկն էր հավատում։ Եվ վերջապես, հնարավոր է, որ Թումանյանը, Անդրանիկի անձով ու գործով այնքան հմայված բանաստեղծը, դո՛ւն մեկ անգամ ազգային հերոսի գործունեությունը չդարձնէր իր բանաստեղծական ներշնչանքի աղբյուր։

Բանաստեղծության հրապարակմանը դուգադիպեց կովկասյան զորքերի առաջիադատը, և մայիսի 6-ին հայ կամավորական զորքերը մտան պաշարված Վան։ Ցնծության մեջ էր Վանի ժողովուրդը։ Ուշագրավ է, որ աջատարությունից մի քանի օր հետո, ի պատիվ հայ կամավորների կազմակերպած դրական-երաժշտական եռերկույթին, Իսահակյանի, Սիամանյոյի ստեղծագործությունների հետ հնչեց նաև Թումանյանի՝ մի քանի օր առաջ Թիֆլիսում լույս տեսած «Վերջին օրը» բանաստեղծությունը¹⁰։

1915-ի հունիսի սկզբներին Թումանյանը Թիֆլիսից մեկնում է Իգդիր, այն անգամ դեպի Վան քնալու մտադրությամբ։ Այս ճանապարհորդությունը, ըստ երևույթին, գաղտնի էր, ոչ մի թերթ որևէ հաղորդում կամ լուր այդ մասին չի հրապարակում։ Պահպանվել են բանաստեղծի այդ օրերի ծոցատետրերը, որտեղ կան շատ արժեքավոր և ուշագրավ նշումներ, մտքեր, տպավորություններ Իգդիր—Վան—Իգդիր ճամփորդության մասին։

Առաջին գլխավորները կատարվել են Իգդիրում, հունիսի 8 թվագրությամբ։ Ճամփորդության ոչ այնքան լրիվ պատկերը ստանում ենք հիշյալ ծոցատետրերի նշումներից, ժամանակակիղների վկայություններից, Վանում հրապարակվող «Աշխատանք» շաբաթաթերթից և պարբերական մամուլից բաղադրված նախնական նյութերի միջոցով։ Իգդիրում ստացած առաջին իսկ տպավորությունները տաճնապով են լցնում բանաստեղծի հոգին, հիասթափեցնում, հուսալիար են անում նրան։

«Կարգագրություն է եղած կանգնեցնել հայ կամավորների գործը,—գրում է նա ծոցատետրում և ապա փակագծի մեջ ավելացնում,—(մեզ հասած հեռադիրը)»¹¹։ Հաջորդ տողերից պարզվում է, որ ինչպես առաջին ճանապարհորդության ժամանակ, դարձյալ ծայր են առել հանիրավի կեղծ մեղադրանքները կամավորների հասցեին։ Պասճառը նույնն էր՝ ցարական որոշ գեներալների անհանգստացում էին հայ կոմիտեների (և ժողովրդի) ազատագրական ձգտումները։ Կենտրոն Օդանովսկին (որին Թումանյանը հանդիպել էր նաև առաջին ճամփորդության միջոցին) զարմացած է հայերի, հատկապես կամավոր զինվորների նկատմամբ տեղի ունեցած վերաբերմունքի փոփոխությունից։

Վանում Թումանյանը մնում է մոտ 15—16 օր։ Այդ ընթացքում նա ծանոթանում է բնակչության հետ, այցելում Կենտրոնական, Երամյան, Սանդրիսյան դպրոցները, հանդիպումներ ունենում երիտասարդության ու մտավորականության հետ։ Բանաստեղծը հիացած էր վանեցիների հայրենասիրու-

⁹ Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ. գ. 2, էջ 354—355։

¹⁰ «Հորիզոն», 1915, № 138։

¹¹ Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ. գ. 2, էջ 362—372։

թյամբ, ազգային ինքնագիտակցության բարձր դրսևորումներով, նրանց հերոսական, անընկճելի ոգով, ապագայի նկատմամբ ունեցած լավատեսության¹²։

Վան հասնելուց երկու օր հետո, հունիսի 14-ին, առաջին իսկ տպավորությունների ազդեցության տակ, բանաստեղծը գրում է «Շուռ է գալիս ծանր քարը...» սկզբնատողով բանաստեղծությունը և կարդում հունիսի 18-ին, երիտասարդության կազմակերպած պատվո թեյասեղանին։

Բանաստեղծության թողած տպավորությունը ցնցող էր։

Ներկաները այդ քերթվածն ընդունեցին որպես երիտասարդության ուղղված կոչ, իսկ հեղինակը նրանց համար դարձավ «ցեղին ավելի երջանիկ ու բախտավոր» ապագա գուշակող, «հոգիով սուրբ» հանճար։ Գրող և հասարակական գործիչ Հովհ. Ավագյանը բանաստեղծությունը գնահատեց որպես «...իմաստով կուռ, լեզվով ճոխ ու բովանդակությամբ հյուսվող ուղեբեժ մը, որ ամեն բանն առաջ, իրավ, հայ կրուրե ծայրեծայր...»¹³։

Վանից վերադառնալուց հետո Թումանյանը բավական ժամանակ իր այդ ճամփորդության տպավորության տակ էր։ Միթերականը նրա համար թուրքական բռնակալությունից նոր ազատագրված Վանի բնակչության խանդավառությունն էր, հատկապես երիտասարդության հերոսական ոգին, ազատ ապրելու նրանց ինքնագիտակցությունը։ Բայց ընդհանուր առմամբ՝ քանդված ու ավերված երկրի պատկերը, ժողովրդի ողբերգական վիճակը հանգիստ չէր տալիս նրան¹⁴։

Սկսվում է Վանի մեծ գաղթը։ 1915 թ. հուլիսի 23-ին թերթերը գումում էին Իգդիրի և էջմիածնի ճանապարհը բռնած փախստական հայերի նոր հոսքի մասին՝ Վանից, Ալաշկերտից և այլ բնակավայրերից¹⁵։ Հուլիսի 26-ին տպագրվում է Թումանյանի «Հանգիստ ու լիքը հավատով» հոդվածը, որը նպատակ ուներ հավատացնելու ընթերցողներին, թե սպանությունները, ավերածությունները, գաղթը, որոնք կազմակերպվում են «հավիտյան նդոված ձեռքերով», վերջինն են։ Այդ հոդվածով հեղինակը հանգստացնում էր խուճապի ենթարկված հայ ժողովրդին, հավատացնում, որ հայ ժողովուրդը մենակ չէ. «էսօր մեզ հետ է ուսական մեծ բանակն ու բովանդակ Թուսաստանը...»¹⁶, — գրում էր նա, թեպետ հոգու խորքում հիասթափված էր ցարական Թուսաստանի օգնությունից, ինչպես շատ որոշակի երևում է հատկապես ծոցատետրերում կատարված նրա գրառումներից¹⁷։

Բայց էջմիածինը, այնտեղ հավաքված անօգնական ժողովուրդը մի աննկարագրելի ուժով ձգում էր նրան և հուլիսի 29-ի գիշերը Թումանյանն արդեն էջմիածնում էր։ Այստեղ նա կազմակերպում է որբերի խնամքի գործը, լստեղծում որբանոցներ, «Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի» և «Եղբայրական օգնության ընկերության» ներկայացուցիչների հետ բացում հիվանդանոցներ, սնունդ, հագուստ, ապաստան հայթայթում ուժասպառ, կիսամերկ, քաղցած գաղթականների համար։ Օգնականներ կային, բայց գործի ամբողջ ծանրությունը Թումանյանի վրա էր։ Կացությունը կրկնակի դժվարացավ, երբ սկսվեց համաճարակը։ Մահացության դեպքերն այնքան շատ էին, որ չէին հասցնում դիակները թաղել։ Միաժամանակ շարունակվում էր փախստականների հոսքը, բազմապատկելով Թումանյանի մտահոգությունները։ Բանաստեղծը դստեր՝ Նվարդի հետ աշխատում էր գիշեր ու ցերեկ։

¹² Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1969, էջ 680—681։

¹³ «Աշխատանք», Վան, 27 հունիսի 1915 (№ 28)։ Նույն պարբերականում հունիսի 24-ին (№ 27) տպագրվում են «Շուռ է գալիս ծանր քարը...» և հունիսի 16-ին գրած «Աղթամարի կղզում» բանաստեղծությունները։

¹⁴ Նվարդ Թումանյան. Հուշեր և զրույցներ. Երևան, 1969, էջ 124։

¹⁵ «Հորիզոն», 1915, № 163։

¹⁶ Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1951, էջ 316։

¹⁷ Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ. գ. 2, էջ 362—371։

Նործը ինչ-որ չափով բավարար հիմքերի վրա դնելուց հետո նա հոգնած, կիսահիվանդ 1915 թ. սեպտեմբերի 10-ին կամ 11-ին վերադառնում է Թիֆլիս¹⁹, ուր մի քանի օր հետո լսում է Լեոնոր՝ Ռոստոմի սպանության բոթը:

Ողբերգական այդ իրադարձություններից հետո, 1915 թ. նոյեմբերի 15-ին տպագրվեց Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը, որով նա, կարծես, ամփոփել էր իր ներքին ողբերգությունը՝ հայոց համազգային ողբերգությունը: Թվում է, հեղինակը փորձել էր պարպել վշտով լի սիրտը, բռնաթափվել էջմիածնի մղձավանջից, Լեոնոր սպանության թողած խոր ազդեցությունից:

...Որ շեն ու բազաք, որ սար ու հովիտ ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փռված ու ցրված հազար հազարով...

Այս բանաստեղծության մեջ չկա նախորդ մեկ տարվա ընթացքում հրապարակված հայրենասիրական չափածո գործերի և հոգվածների թումանյանական լավատեսությունը, որի մղումով նա բաղմիցս հավատացնում էր, թե իր ժողովուրդը պայքարում է վերջին անգամ, ապրում է վերջին տագնապը և խոստանում էր «հանուր կյանքի արշալույս»: Բանաստեղծը ծանր հոգեվիճակի մեջ էր, այդ ուկնհայտ է հատկապես երկու անգամ կրկնվող այս տողերում:

—Հանդեր, իս որբեր... իղձի և հուզմունք, իղձի և անշա...
Մարդակեր դադան՝ մարդը՝ ղեռ երկար էսպես կրմնա:9...

Հետաքրքրական է մի այլ բանաստեղծության ստեղծագործական պատմությունը, որի մասին նույնպես Թումանյանի երկերի հրատարակություններում որևէ ակնարկ չկա: Ժամանակակիցների հուշերից պարզվում է, թե ինչպիսի հանգամանքներում է ստեղծվել Թումանյանի «Դժոխքի հանդես» բանաստեղծությունը:

1916 թ. ձմռանը՝ Սասունի մարտիկների կողմից Թիֆլիս ուղարկված Մարտիրոս վարժապետը Ազգային բյուրոյի նիստում Արևմտյան ճակատի և, հապկապես, Սասունի դեպքերի մասին ղեկուցելիս նկարագրում է կոտորածները՝ իրենց մեծ ողբերգությամբ ու քստմնելի տեսարաններով: «Ամենքս ցընցված էինք,—գրում է հուշագիրը,—իսկ Թումանյանի դեմքը սպիտակ ծեփի պույն էր առել: Երբ Մարտիրոս վարժապետը սկսեց պատմել, թե ինչպես մեկ հայ կնոջ ստիպել էին խմել սևփական զավակի արյունը՝ սուլթանի կենացը՝ Թումանյանը ելավ տեղից և դողդոջ քայլերով մեկնեց նիստից: Մի ամբողջ շաբաթ նա հիվանդ էր: Այս դեպքի ազդեցության տակ է գրված նրա մի ոտանավորը, որից հիշողությանս մեջ մնացել են միայն վերջին երկու տողերը:

Եվ մարդն ամառի շնից ու գիլից,
Որ մարդ է մեծ իրեն նմանից...²⁰

Այս տողերը փոքր-ինչ ազալադված են, պետք է լինի՝

Եվ մարդն ամառի գիլից ու շանից
Որ մարդ է ծրնվել՝ մարդու նմանից²¹:

¹⁹ Նվարդ Թումանյանը հիշողությամբ գրում է սեպտեմբերի 15-ին («Հուշեր և զրույցներ», էջ 135), բայց քրոջը՝ Աշխեն Թումանյանին նրա գրած և Արտավազդ Թումանյանի՝ Պողոս Մակինցյանին գրած նամակներից պարզվում է, որ նա ավելի շուտ է վերադարձել (տե՛ս Թումանյանի թանգարան, ՓՔ, №№ 3776, 3788):

¹⁹ Հոգվ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 2, 1969, էջ 221—222:

²⁰ Հեղինակը գրում է 1915-ի ամառ, որ անշուշտ վրիպում է, ապացույց՝ բանաստեղծության տպագրության ժամանակը՝ 1916, փետրվարի 28:

²¹ «Վեմ», Ա, Փարիզ, 1933, էջ 21:

²² Հոգվ. Թումանյան. Երկերի ժողովածու, հ. 2, 1900, էջ 227:

Բաւժ ուա էական չէ. խոսքը վերաբերում է «Դժոխքի հանդեպ» բանաստեղծութիւններ. այն լույս է տեսել «Հորիզոնում» 1916 թ. փետրվարի 28-ին (№ 46). իսկ հետո՞րդ համարում օրաթերթի խմբագրությունը հայտնում է, թե անցյալ համարում Հ. Թումանյանի «...բանաստեղծության մեջ ակնարկված երեխայի արլունը մորը խմեցնելու դեպքը վերջին օրերի իրականությունից է առած»²³:

1916 թ. Թումանյանը, ի պատասխան որոշ կեղծարարների տարածած լուրերի, ցույց է տվել, որ Անդրանիկը մեծ հարգանք ունի հարևան ժողովուրդների նկատմամբ: Բանաստեղծը Անդրանիկին բնորոշում է որպես մարդասեր գործչի, որի համար հաշտ ու խաղաղ քուրդը նույնն է՝ ինչ իր ազգակից հայը և ի հաստատումն այդ գնահատականի բերում է Անդրանիկի խոսքերը. «Երբ իրիկունը գլխներդ բարձին կդնեք, որ քնանաք. մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին: Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի և բարի մտածեցեք»²⁴: Այդ շրջանում է, որ Թումանյանը հրապարակել է «Վրաստանի համար» բանաստեղծությունը.

Երբ խոսում են Վրաստանի
Թշնամանքից արլունոտ,
Զարմանք է ինձ պատում հայտնի
Եվ խորին ցավ ու ամոթ.

Այս բանաստեղծության մեջ ակնառու է հեղինակի ջերմ ու անկեղծ սերը, վստահությունն ու հավատը իր ժողովրդի դարավոր հարևանի նկատմամբ, որը «աղ ու հացն է սիրել» ու եղել է «միշտ աշխարհքին բարեկամ»²⁵:

Բանաստեղծությունների գիտական հրատարակության մեջ չկա այս ստեղծագործության մտահղացման պատմությունը և հրապարակման շարժառիթը, միայն բովանդակության վրա հենվելով՝ որոշել են գրության տարեթիվը՝ 1916 և գրել, որ բանաստեղծությունն ունի «Հողվածի փոխարեն» ենթավերնագիր²⁶: Բայց թե ինչու է բանաստեղծությունը գրված Հողվածի փոխարեն, կամ թե ի՞նչ Հողված պետք է գրեր բանաստեղծը և ի՞նչ առիթով՝ այդ մասին ոչինչ չկա:

«Ի՞նչ են ասում» հողվածը, որ մտել է Թումանյանի երկերի գիտական հրատարակության 6-րդ հատորի մեջ, ծանոթագրություններում չունի հողվածի հրատարակման պատմությունը՝ չկա տեղեկություն Թումանյանի շտիպածո եղրափակիչ ինքնատիպ խոսքի և «Ի՞նչ են ասում» հողվածի կապի մասին²⁷, որի անհրաժեշտությունը, ինչպես երևաց, անառարկելի է:

Թումանյանի յուրաքանչյուր երկի գրության կամ հրատարակության ստույգ ժամանակը (նույնիսկ օրը), տեղը, մտահղացման շարժառիթները օգնում են ամբողջացնելու երկերի ստեղծագործական պատմությունը, ճանապարհ հարթում դեպի գրողի ժառանգության գիտական նոր հրատարակությունը և նրա կյանքի ու գործի տարեգրության սանդղծումը:

²³ «Հորիզոն», 1916, № 47 (մարտի 1).

²⁴ Հ ո վ Վ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 6, 1959, էջ 225.

²⁵ Նույն տեղում, հ. 1, 1950, էջ 187: Բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է 1916 թ. սեպտեմբերի 18-ին «Հորիզոնում»:

²⁶ Նույն տեղում, էջ 657.

²⁷ Նույն տեղում, հ. 6, էջ 455.

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ НЕКОТОРЫХ СТИХОТВОРЕНИИ ОВАНЕСА ТУМАНЯНА

Л. М. КАРАПЕТЯН

Резюме

В статье показаны истоки творческого воплощения стихотворений О. Туманяна «Последняя тревога», «С отчизной», «Последний день», «Сваливается гнет...», «Поминование», «Перед адом», «Грузин», написанных в 1914-1916 гг. Стихотворения эти своими мотивами определенно соотносятся с политическими событиями времен первой мировой войны, с русской ориентацией Туманяна, с двумя его поездками в Западную Армению, с его самоотверженной деятельностью, направленной на спасение от смерти и болезней беженцев и сирот, после геноцида западных армян в 1915 г. оказавшихся в Эчмиадзине. На фактическом материале доказывается, что стихотворения «Последний день» и «Грузин» имеют непосредственное отношение к имени народного героя Ахурапата.